ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2023 թվականի №-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱԳԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը մինչև 2022 թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան հաշվետվությունը, սակայն չի ներկայացրել, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2022 թվականի նոյեմբերի 16-ի №447-Ա որոշմամբ, որն անբողոքարկելի է դարձել 2023 թվականի փետրվարի 27-ին, անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին նախազգուշացրել է և պարտավորեցրել որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը,

բ) Որոշման համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը մինչև 2023 թվականի հունվարի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2022 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն), սակայն չի ներկայացրել,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը 2023 թվականի հուլիսի 13-ին անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 13-ի №ԳԲ/34.2-Մ2-7/2341-2023 գրությամբ,

դ) անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) Որոշման համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը մինչև 2023 թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածներով հաստատված ձևերին համապատասխան 2023 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունները, սակայն չի ներկայացրել,

զ) Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը 2023 թվականի օգոստոսի 8-ին անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ և նկատի ունենալով, որ վերջինիս նկատմամբ 2023 թվականի հուլիսի 13-ին և օգոստոսի 8-ին հարուցված վարույթների համատեղ իրականացումը կարող էր ապահովել ավելի արագ և արդյունավետ լուծում, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթները միացվել են, որի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ ևս դիրքորոշում չի ներկայացրել,

է) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ միևնույն անձի մասնակցությամբ վարույթների միացման դեպքում տուգանք կիրառելիս կիրառվում է կարգավորվող անձի թույլ տված խախտումների համար նախատեսված տուգանքներից առավել խիստ տուգանքի առավելագույն չափը, և այն պարագայում, երբ նույն մասով նախատեսված պատասխանատվության կիրառումն առավել անբարենպաստ է խախտում կատարած անձի համար, քան եթե այն կլիներ վարույթների առանձին իրականացման պարագայում, Հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի №ԳԲ/34.2-Մ2-9/4097-2023 գրությամբ միացված վարույթներն առանձնացվել են,

ը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 35-րդ հոդվածի 1-ին մասը ՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջի խախտման համար անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին նախազգուշացնել:

2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի 2-րդ կիսամյակի Հաշվետվությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2023թ.